

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՐԻ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

*Փիլիսոփայության ամբիոնի դոցենտ,
փիլիսոփայական գիտությունների
թեկնածու*

ԿՐՈՆԻ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ԱԶԳԵՐԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ազգերի և ազգայնականության հիմնախնդիրներին նվիրված ժամանակակից գրականության մեջ ընդունված է առանձնացնել ազգերի ձևավորման տարբեր մոդելներ: Հիմք ընդունելով ազգայնական շարժումների սոցիալական կազմերի տարբերությունները՝ որոշ հետազոտողներ նախապատվությունը տալիս են «արևմտյան» և «արևելյան» մոդելներին: Ոմանք տարբերակում են ազգերի ծագման ֆրանսիական և գերմանական մոդելները՝ հաշվի առնելով, որ Ֆրանսիական մեծ հեղափոխությունից է սկիզբ առնում ազգերի՝ որպես մարդկանց ազատ հանրության քաղաքական դրսևորումը: Ազգերի ծագման «արևմտյան» կամ «ֆրանսիական»¹ հայեցակարգը ազգը ներկայացնում է իբրև «քաղաքացիական համակեցություն» և հենվում է տարածքային ընդհանրության վրա. ըստ այդմ՝ ազգը «բնակչություն է, որ ունի ընդհանուր անուն, տիրապետում է պատմական որոշակի տարածքի, ընդհանուր առասպելների և պատմական հիշողության, ունի ընդհանուր տնտեսություն, ընդհանուր մշակույթ, իրավունքներ և պարտականություններ»: Մյուս հայեցակարգը, որ ընդունված է անվանել «արևելյան» կամ «էթնոմշակութային» (գերմանական), բնորոշ է ժամանակագրի և «ազգը» սահմանում է որպես «ոգու օրգանական միասնություն», որը հենվում է ընդհանուր ծագումնաբանության (այստեղից էլ բազմաթիվ ժողովուրդների մոտ պահպանված «նախահոր» առասպելը), էթնիկ ինքնագիտակցության (որը կարող է որոշ ժամանակ նաև «ննջել», բայց և արթնանալ որոշակի պահի), ինչ-որ չափով կայուն մշակութային պաշարի և լեզվի ընդհանրության վրա: Այս հայեցակարգի տեսանկյունից լեզուն ազգի էությունն է:

Ժամանակակից փիլիսոփայական գրականության մեջ առանձնացվում են նաև ազգերի և ազգային հիմնախնդիրների ըմբռնման *սրբիմորդիալիստական*, *մոդեռնիստական* և *կոնսերվատիվիստական* մոտեցումները: *Պրիմորդիալիստական*² ըմբռնմանը, որ հաճախ ներկայացվում է նաև որ-

¹ Այն, ինչն անվանում ենք *ֆրանսիական մոդել*, կարելի է բնութագրել հետևյալ կերպ. «Ուրաեղ Ֆրանսիան է, այնտեղ էլ ֆրանսիացիներն են», մինչդեռ գերմանական մոդելի համաձայն՝ «Ուրաեղ գերմանացիներն են, այնտեղ էլ Գերմանիան է»:

² Պրիմորդիալիզմ (անգլերեն՝ primordial-վադեմի, շատ հին, նախասկզբնական). օգտագործվում է ազգերի բնական ծագումնաբանությունը և նախասկզբնականությունը բնութագրելու համար:

պես *էսենցիալիստական* (էական, հիմնական) կամ *մատուրալիստական* (բնական), հատուկ է էթնիկականության գոյաբանականացումը: Ազգերի և ազգայնականության խոշորագույն տեսաբաններից մեկը՝ Է. Սմիթը, պրիմորդիալիստական ըմբռնման տեսանկյունից ազգը բնութագրում է որպես՝ ա) քաղաքականացված էթնոմշակութային հանրույթ, որին հատուկ է ընդհանուր ծագումնաբանությունը, բ) հավերժությունը, այսինքն՝ ազգերի արմատները գնում են հազարամյակների խորքը, գ) անբաժանելի կապվածությունն իր պատմական հայրենիքին, դ) հասարակ ժողովրդի միավորում, որն արտացոլում է նրա պահանջմունքներն ու ակնկալիքները, ե) գոյության ձև, որոշակի հատկությունների ամբողջություն, զ) միասնական կամքով, բնավորությամբ և հատկանիշներով օժտված հանրույթ, է) նախնիների և նրանց մշակույթի հետ ժառանգականորեն կապված ամբողջություն:

Մինչդեռ, ըստ *մոդեռնիստական* ըմբռնման, ազգը՝ ա) տարածքային քաղաքական հանրույթ է, բ) միանգամայն նոր երևույթ է, հետևաբար՝ չի եղել անցյալում, այլ առաջացել է ժամանակակից պայմաններում, գ) «հասարակ ժողովրդի միավորում» չէ, ինչպես ենթադրում են պրիմորդիալիստները, այլ ստեղծված է նրա անդամների մի մասի՝ վերնախավի կողմից, դ) գործունեության հնարավորություն է: Ազգերին հատուկ է բաժանվածությունը՝ սոցիալական, կրոնական, գենդերային խմբերի, ազգային համերաշխությունը հենվում է հաղորդակցության և քաղաքացիության սկզբունքների վրա³:

Կոնստրուկտիվիզմը նույնպես մերժում է էթնիկականության գոյաբանական բնույթը, օբյեկտիվ տրվածությունը և ազգը ներկայացնում որպես մարդկային համոզմունքների, հակումների ամբողջություն. «Երկու մարդ պատկանում են միևնույն ազգին միայն և միայն այն դեպքում, երբ նրանցից յուրաքանչյուրն ընդունում է մյուսի պատկանելությունը տվյալ ազգին: Հետևաբար՝ ազգ ստեղծում է մարդը, ազգերը մարդկային համոզմունքների, հակումների, կողմնակալության արդյունք են... Այսինքն՝ ազգայնականությունն է ծնում ազգեր և ոչ թե հակառակը»⁴, - գրում է Է. Գելները: Նույն տեսակետն է զարգացնում նաև Ռուսաստանի ԳԱ էթնոլոգիայի և մարդաբանության ինստիտուտի տնօրեն Վ. Տիշկովը, որով համարվում է կոնստրուկտիվիստական ըմբռնման ռուսական դպրոցի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը: Նրա կարծիքով՝ «ազգերը ազգայնական գաղափարախոսության արդյունք են և ծագում են այն պահից, երբ ազդեցիկ մարդկանց մի խումբ որոշում է, որ հենց այդպես պետք է լինի»⁵:

Ուշագրավ է, որ բոլոր այն մոդելներում և տեսություններում, որտեղ ազգը բնութագրելիս հաշվի են առնվում որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներ՝ տարածքային և տնտեսական, լեզվի և մշակույթի ընդհանրությունները, ընդհանուր ծագումնաբանությունը, մարդաբանական տեսակը, պատմական հիշողությունը, պետության հետ զուգակցությունը և այլն, կրոնի և եկեղեցու ընդհանրությունը համարվում է ոչ թե անհրաժեշտ,

³ Տե՛ս **Смит Э.**, Национализм и модернизм (Критический обзор современных теорий нации и национализма). М., „Праксис“, 2004, էջ 56-58:

⁴ Տե՛ս **Геллер Э.**, Нация и национализм. М., „Прогресс“, 1991, էջ 35,127:

⁵ **Тишков В.**, Что есть Россия и российский народ // Proetcontra, 2007, N 7(37), с. 33-34.

այլ ցանկալի: Այսինքն՝ եթե անգամ անտեսված չէ կրոնի և եկեղեցու դերը ազգ – ազգային պետություն – ազգային ինքնագիտակցություն ձևավորելու մեջ, ապա, կարելի է ասել, մղված է երկրորդ պլան: Այնինչ, ազգային կրոնի և եկեղեցու դերը եղել է որոշիչ ոչ միայն վաղ շրջանի հասարակություններում, երբ, ինչպես նկատում էր գերմանացի նշանավոր ընկերաբան Մաքս Մյուլլերը (1823 - 1900)՝ «ամեն մի կրօն սկզբներում մի ազգութիւն էր»⁶, կամ միջին դարերում և նոր ժամանակներում, այլև ժամանակակից պայմաններում, և միևնույն ծագումնաբանությունը, լեզուն և պատմական հիշողությունն ունեցող որոշ ժողովուրդներ այսօր ներկայանում են որպես տարբեր ազգեր միայն այն պատճառով, որ տարբեր են եղել նրանց կրոնն ու եկեղեցին⁷: Ամենատիպական օրինակներն են, թերևս, հռոմեական կաթոլիկությունն իր լատինական գրաֆիկայով՝ խորվաթների, ուղղափառությունն իր կիրիլիցայով՝ սերբերի, մահմեդականությունն իր հռոմեական գրաֆիկայով՝ բոսնիացիների պարագայում: Այդ երեք ժողովուրդներն իրարից սկսեցին հեռանալ կրոնական տարբերության պատճառով, և նրանց միջև առկա ընդհանրությունները, նույնիսկ պատմական հիշողությունը, միևնույն քաղաքական միավորի մաս կազմելը⁸ չմիավորեցին նրանց: Նույնը կարող ենք ասել նաև սլավոնական մյուս ազգերի՝ կաթոլիկ լեհերի և ուղղափառ ռուսների, բելառուսների կամ ուկրաինացիների մասին: Խոշորագույն ռուս փիլիսոփաներից մեկը՝ Վլադիմիր Սոլովյովը (1853-1900), խոսելով ռուս-լեհական հարաբերությունների մասին, նկատում էր, որ թեպետ ռուսական կառավարումը Լեհաստանին ապահովել է այնպիսի հասարակական-տնտեսական բարեկեցություն, որին նա չէր կարող հասնել ո՛չ պրուսական և ո՛չ էլ ավստրիական տիրապետության օրոք, այնուամեն-

⁶ Ըստ՝ Մ. Վարանդյան, Հայրենիքի գաղափարը, Ժնև, 1904, էջ 17:

⁷ «Ազգային կրոն» և «ազգային եկեղեցի» ասելով մենք չենք ցանկանում ընդգծել միայն որևէ ազգի կամ ազգային որոշակի խմբի շրջանակներում ձևավորված և տարածում ստացած կրոնները, ինչպիսիք են հինդուիզմը, ջայնականությունը և սինկիականությունը Հնդկաստանում, գրադաշտականությունը Պարսկաստանում և Հնդկաստանում, կոնֆուցիականությունը և դաոսականությունը Չինաստանում, սինտոիզմը Ճապոնիայում, հրեաների հրեականությունը կամ հայերի հայկապաշտությունը, որոնք ունեն կրոնափիլիսոփայական տարբեր համակարգեր, հավատալիքներ, պաշտամունքներ և ծեսեր: Ասվածը վերաբերում է նաև համաշխարհային կրոններին, այդ թվում նաև քրիստոնեությանը, որովհետև, սկսած երկրորդ դարից, քրիստոնեության մեջ՝ ընթանում էր ազգայնացման գործընթաց, որի արդյունքում, յուրաքանչյուր ժողովրդի մեջ, նույնիսկ միևնույն եկեղեցուն պատկանող, ձևավորվում են էական տարբերություններ, ինչպիսիք կան վրացական, ռուսական, հունական և մյուս ուղղափառ եկեղեցիների կամ իտալական, լեհական, իսպանական և այլ կաթոլիկ եկեղեցիների միջև՝ պայմանավորված քրիստոնեության ընդհանուր տեսությանը միաձուլված ազգային առասպելաբանությամբ, սրբացված ազգային հերոսներով, հազարամյակների ընթացքում մշակված ավանդույթներով և այլն:

⁸ Դեռևս IX դարում ձևավորվեց սերբական պետությունը, որի կազմում էին հարավսլավոնական այդ ժողովուրդները: Այն իր հզորության բարձրակետին հասավ Ստեֆան Տուշանի թագավորության տարիներին, սակայն 1459 թ. մինչև 1878 թ. այս ժողովուրդները հայտնվեցին Օսմանյան կայսրության տիրապետության տակ, որի ընթացքում էլ Բոսնիայի սլավոններն ընդունեցին մահմեդականություն և առանձնացան սերբերից ու խորվաթներից: Թեպետ հետագայում այդ ժողովուրդները վերստին միավորվեցին մեկ ընդհանուր քաղաքական միավորի մեջ՝ 1918 թ. Հարավսլավիայի թագավորության, իսկ 1945 թ. մինչև 1991 թ. Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության կազմում, ազգային միասնությունն այլևս չկայացավ:

նայնիվ, «...լեւի հայրենասերներն ավելի շուտ կհամաձայնեն խեղդվել գերմանական ծովում, քան անկեղծորեն հաշտվել Ռուսաստանի հետ, իսկ դա նշանակում է, որ այստեղ առկա են թշնամանքի ավելի խոր, հոգևոր պատճառներ: Լեհաստանը Արևմտյան Եվրոպայում այն հոգևոր սկզբի ներկայացուցիչն է, որն ընկած է արևմտյան պատմության հիմքում: Իր հոգևոր էությանը լեւի ազգը և ամբողջ կաթոլիկ սլավոնականությունը սահմանակցված է եղել արևմտյան աշխարհին: Ոգին արյունից ավելի ուժեղ է. գերմանացիների հանդեպ արյան հակակրանքով և ռուսների հանդեպ արյան մերձավորությամբ հանդերձ՝ լեհականության ներկայացուցիչներն ավելի շուտ կհամաձայնեն գերմանացմանը, քան Ռուսաստանի հետ ծուլմանը: Արևմտաեվրոպացին, նույնիսկ բողոքականը, հոգեպես ավելի մոտ է լեւի կաթոլիկին, քան ուղղափառ ռուսը»⁹: Դա պայմանավորված է նրանով, որ լեւի հոգին ձևավորվել է կաթոլիկ, իսկ ռուսի հոգին՝ ուղղափառ եկեղեցու ազդեցությամբ, և Արյան ընդհանրությունն աստիճանաբար իր տեղը զիջել է Ոգու ընդհանրությանը: Եթե մինչև IV դարը արևմտյան և արևելյան հայրաբանական ու աստվածաբանական մոտեցումները համընկնում էին «մեղքի», «երանության» և «ազատության» ըմբռնումների առումով, ապա V դարից սկսած նկատվում են լուրջ հակադրություններ աստվածաբանական խնդիրներում, որոնց գումարվում են նաև ծիսակարգային տարբերություններ: Դրանք, աստիճանաբար խորանալով, ինչպես նկատում է Բ.Սարտորիուսը, հանգեցնում են ժամանակի և տարածության զգացողության տարբերության¹⁰, որն էլ, իր հերթին, նպաստում է աշխարհայացքային տարբերությունների ձևավորմանը: Արդյունքում՝ ուղղափառ ռուսը կամ ուկրաինացին բոլորովին այլ կերպ են ընկալում, թե ինչ է փողը, իրավունքը, արդարությունը, պատասխանատվությունը, սերը, ուրախությունը, միայնությունը, գեղեցիկը, մահը, երջանկությունը, ազատությունը և այլն, քան կաթոլիկ լեւը կամ խորվաթը: Այդ տարբերությունների և առանձնահատկությունների հետևանքով չէ՞ր, որ կաթոլիկ երկրներում այնքան մեծ դեր ունեցած կրոնական տարաբնույթ միաբանություններ՝ օրդեններ (Տևոնական, Ֆրանցիսկյան, Դոմինիկյան) չստեղծվեցին ո՛չ ուղղափառ երկրներում, ո՛չ էլ հայ եկեղեցու շրջանակներում: Այսինքն՝ քրիստոնեական տարբեր եկեղեցիների հոգևորականությունը, ինչպես նաև հավատացյալները միանգամայն այլ խորհուրդ են տեսնում իրենց առաքելության մեջ¹¹:

Հետևաբար՝ ինչքան էլ որ կրոնի և եկեղեցու դերը երկրորդական համարվի «ազգ» հասկացությունը սահմանելիս, էությունը չի փոխվում: Ազգային կրոնը և եկեղեցին սերտորեն կապված են ազգային ինքնագիտակցության ձևավորման հետ, կազմում են ազգային մշակույթի ոգին և այն կարևորագույն գործոն-խթանը, որը ժամանակի ընթացքում ստեղծում է «ազգ» հանրույթը: Այս առումով ամենատիպականը, թերևս, հրեական կրոնի և եկեղեցու կապն է հրեության հետ: Ո՞վ է հրեան. ա՞զգ, էթնո՞ս, թե՞

⁹ Соловьев В., Национальный вопрос в России. М., „Хранитель“, 2007, с. 24 -25.

¹⁰ St'u Дмитриев М., Человек Православный и Homo Catholicus, Ист.: <http://if.russ.ru/issue/9/Homo.html>, „Интеллектуальный форум“, 9 вып., 2002:

¹¹ Այս ամենի մասին ավելի հանգամանորեն՝ Дмитриев М., Человек Православный и Homo Catholicus, նշվ. հրատ.:

կրոնական համայնք: Թեպետ սիոնիստական պատմագրությունը կառչել է այն մեկնակերպին, ըստ որի հրեաները նախկինում ապրել են Էրեց-Իսրայելում (Իսրայել երկրում), և 70 թվականին, հռոմեացիների կողմից վտարվելուց հետո, սկսվել է նրանց տարագրությունն ամբողջ աշխարհում, սակայն այսօր այդ տեսակետը համարվում է ոչ հավաստի, քանի որ հիմնականում հենվում է սերնդից սերունդ փոխանցված ավանդության և Աստվածաշնչի վրա: Թեև Ավիվի համալսարանի պրոֆեսոր Շլոմո Չանդը շրջանառության մեջ է դրել մեկ այլ վարկած, որն աստիճանաբար ավելի լայն տարածում է ստանում: Չանդի կարծիքով՝ հրեական էթնոսի (գենետիկորեն կապված մարդկանց խմբի) մասին միտքը ծագել է Մերձավոր Արևելքում և որևէ կերպ չի հաստատվում. նույնիսկ վտանգավոր է, քանի որ օգտագործվում է «ազգ» հասկացությունը, որը հենվում է ռասայական հատկանիշների վրա: «2000 տարի առաջ Իսրայելից արտագաղթել է ոչ թե ժողովուրդը, այլ նրա կրոնն է տարածվել», - նշում է պրոֆեսորը: Հետևաբար՝ այսօրվա հրեաները այն ժողովուրդների սերունդներն են, որ հարյուրավոր տարիներ առաջ ընդունել են հրեական կրոնը: Ըստ նրա՝ Իսրայելից հրեաների վտարման դրույթը մշակել են քրիստոնյաները, իսկ «նախնիների հայրենիք վերադառնալու» գաղափարը սիոնիստական պատմագրության մեջ ստեղծված մոդել է: Չանդի կարծիքով՝ Եվրոպայի, Հյուսիսային Աֆրիկայի և Ասիայի հրեական համայնքները ձևավորվել են մարդկանց՝ այլ հավատի անցնելու արդյունքում¹²: Փաստորեն, եթե հետևելով որևէ դավանաբանության, տվյալ դեպքում՝ հրեությանը, յուրաքանչյուրը, անկախ իր ռասայական-ծագումնաբանական պատկանելությունից, կարող է դառնալ հրեա, ուրեմն, առկա է նաև հակառակ երևույթը, այսինքն՝ հրաժարվելով սեփական կրոնից և եկեղեցուց, մարդը կորցնում է ազգային ինքնագիտակցությունը և ազգային պատկանելությունը: Բնականաբար, այդ վտանգից ապահովագրված չեն նաև այն հայ զանգվածները, որոնք հեռացել են մայր եկեղեցուց և նրա դավանաբանությունից՝ հատկապես գաղթօջախներում: Մենք, իհարկե, հեռու ենք ծայրահեղականությունից, ավելին, համոզված ենք, որ կաթոլիկ Մխիթարյանները կարող են Ալիշաններ, Պեշկեպաշյաններ կամ Դանիել Վարուժաններ ծնել, իսկ Հայ ավետարանական եկեղեցին՝ Մ.Ս. Գաբրիելյաններ, սակայն, դա ամենևին չի վերացնում վերոնշյալ վտանգը: Այդ է վկայում նաև լեհահայ գաղթօջախի պատմությունը: Դեռևս XIV-XV դարերում Լեհաստանում ապաստան գտան մեծ թվով հայեր, որոնց թիվը XVII դարի կեսերին հասնում էր մի քանի հարյուր հազարի: Եվ չնայած նրանց տրված բազմաթիվ արտոնություններին, հատկապես ազգային դպրոցներ, հիվանդանոցներ, եկեղեցիներ ունենալու հնարավորությանը՝ XVIII դարի վերջին - XIX դարի սկզբին գրեթե ամբողջությամբ ձուլվեցին լեհերին: Դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ Վատիկանի նախաձեռնած եկեղեցական ունիան, որն ուղղված էր, այսպես կոչված, «կրոնական հերձվածքի»՝ Հայ առաքելական և ուղղափառ եկեղեցիների դեմ, հայերի ստվար մի զանգվածի, 1630-ական թվականներից սկսած, աստիճանաբար ենթարկեց դավանափոխության, և 1689 թ.

¹² Տե՛ս **Шломо З.**, Кто и как избрал еврейский народ? Что такое народ и когда он становится нацией. RTF, RUS, 2009:

Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի Հայ եկեղեցին պաշտոնապես հայտարարվեց Էջմիածնից անկախ և միացվեց Հռոմի կաթոլիկ եկեղեցուն: Եկեղեցական ունիան արագացրեց լեհահայ համայնքի քայքայման ու ձուլման ընթացքը, և նախկին ծաղկուն գաղութը դավանափոխության, ինչպես նաև Ռեչ Պոսպոլիտայի քաղաքական և տնտեսական անկման պատճառով սկսեց նոսրանալ, մանավանդ որ նրանցից շատերը, ընդունելով կաթոլիկ դավանանքը, հեռացան ազգային արմատներից և մոռացան մայրենի լեզուն: «Մի էջ լեհահայոց հոգևոր կյանքի պատմությունից» հոդվածում Վարուժան Կիրակոսյանը հղում է անում Ֆ.Զախարիաշևիչին, ով Լեհաստանում հայոց լեզվի անհետացման և հայերի դավանափոխության վերաբերյալ գրում է. «Խզելով կապերը Էջմիածնի հետ՝ այստեղի հոգևորականները Հայաստանի հետ հայերեն լեզվով գրագրության կարիք այլևս չէին գգում և չէին ստանում Էջմիածնի կաթողիկոսի որոշումները: Թորոսովիչը (Նիկոլ Թորոսովիչ, ով 1626 թ. Էջմիածնից Լվով փախած Մեյքիսեդեկ աթոռակից կաթողիկոսի կողմից, ում մեղադրում էին կույս Հռիփսիմեի մասունքները կաշառքով ֆրանկներին հանձնելու մեջ, օծվեց եպիսկոպոս և կարգվեց լեհահայոց թեմի առաջնորդ՝ հակառակ ժողովրդի կամքի) իր կարգադրությունները, կարծեմ, անում էր լեհերենով: Իսկ հայերին ստիպում էին միանալ լատինական կաստյոլին, և ժողովուրդը հաճախում էր այդ կաստյոլները՝ ավելի շուտ սովորելով տեղական լեզուն և մոռանալով իր լեզուն...: Այսպիսով, հայերենի օգտագործումը դադարեցվեց, և այդ լեզուն գրեթե լիովին անհետացավ»¹³:

Թերևս, ինչ-որ առումով, որպես բացառություն կարելի է նշել Մխիթարյան միաբանությունը, որի հիմնադիր Մխիթար Սեբաստացին հայտարարում էր. «Որչափ կրնամ և որչափ որ կենդանի եմ, պիտի ջանամ աշխատիլ ազգիս հոգետր օգտին և շահաւետութեան համար, թէ և երբեմն հաւատոյ ճշմարտութեան համար մեղադրուած և արհամարհուած ըլլամ ոճանցէ, և կամ ճիշտ արհամարհուիմ»¹⁴: Պետք է փաստել, որ նա այդպես էլ ապրեց: Այդ սկզբունքով ապրեցին և գործեցին նաև միաբանության անդամներից շատերը՝ Միքայել Չամչյանը (1738-1823), որի «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784» մեծարժէք աշխատությունը դարակազմիկ նշանակություն ունեցավ հայ պատմագրության համար, Գաբրիել Ավետիքյանը (1750-1827), ում՝ Օգոստինոս Երանելու «Յաղագս քաղաքին Աստուծոյ» թարգմանության մասին «վարժապետաց վեհագոյնը» Արսեն Բագրատունին (1790-1866) ասել է. «Եթէ բոլոր նախնեաց գրքերը կորսուած ըլլային, ես Աւետիքեանի տոյն թարգմանութենէն հայերէն կը սորվեի»¹⁵, Մկրտիչ Ավգերյանը (1762-1854), ում հանճարի արդյունքն է «Հայկազյան բառարանը» (Ա տառը Ավետիքյանինն է, Բ-ից մինչև Է տառը՝ Սյուրմելյանինը), Գևորգ Ալիշանը (1820-1901), ում

¹³ Վ.Կիրակոսյան, Մի էջ լեհահայոց հոգևոր կյանքի պատմությունից, http://www.lusamut.net/level2_.php?id=35&id_2=663&cat_=2&s=19

¹⁴ Հ.Ս. Էփրիկեան, Ս.Ղազար // Մխիթարեան հոբելեան (1701-1901), Վենետիկ, Ս.Ղազար, 1901, էջ 357:

¹⁵ Հ.Բ.վ.Սարգսեան, Երկհարիւրամեայ գրական գործունեութիւն և նշանաւոր գործիչներ, Վենետիկ, Ս.Ղազար, 1905, էջ 94:

Բ. Սարգսյանը բնութագրում է որպես «ազգային բանաստեղծութեան ու քերթողաց արեգակը... Յետագայք՝ գրեթե առհասարակ՝ անկէ լուսաւորուեցան ու ներշնչուեցան»¹⁶: Այնուամենայնիվ, դավանաբանական տարբերությունները, Վատիկանի սահմանած վերահսկողությունը, ինչպես նաև Կ.Պոլսի կաթոլիկների պարսավանքները¹⁷ խանգարում էին նրանց կատարելու այն, ինչի համար կոչված էին իրականում: Մ. Չամչյանն, անդրադառնալով եկեղեցական-դավանաբանական խնդիրներին, որպես կաթոլիկ միաբանության անդամ, չկարողացավ դուրս գալ կաթոլիկ եկեղեցու սկզբունքների և Հռոմի քաղաքականության դեմ, որ ձգտում էր իրեն ենթարկել հայ եկեղեցին, և այդ դրությունից դուրս գալու համար բռնեց երկու եկեղեցիների միջև առկա դավանաբանական տարբերությունները համահարթելու ուղին, արտահայտելով այն տեսակետը, որ հայ եկեղեցին ի սկզբանե չի հակադրվել կաթոլիկությանը: Իհարկե, դա չի համապատասխանում իրականությանը: Եկեղեցիների և դրանց դավանաբանական բաժանումները կատարվել են գիտակցաբար: Քաղկեդոնի տիեզերաժողովին հայ եկեղեցու չմասնակցելը և նրա սկզբունքներից հրաժարվելը քաղաքական քայլ էր, նույնպիսի քայլ էր հենց քրիստոնեության պետականացումը՝ կապված ազգային ինքնության պահպանման հետ: Այդ է վկայում նաև Հ. Ասատրյանը, երբ գրում է. «Գ. դարու վերջերին հայերը իրենց ազգայնականութիւնը փրկելու յոյսով զինակցեցին քրիստոնէութեան... Քրիստոնէութիւնը ձուլեց հայ ազգային ոգուն եւ հոգեբանական իւրայատուկ մի համադրումով՝ հայը հանդիսացաւ քրիստոնէայ մարդու մէկ տիպար՝ «հայ-քրիստոնէայ»¹⁸: Եվ ինչքան էլ որ իրավացի է ռուս նշանավոր փիլիսոփա Վլ. Սոլովյովը, երբ Ի.Ս. Ակսակովին ուղղված իր բաց նամակում, խոսելով արևելյան և արևմտյան եկեղեցիների բաժանման, դրանց միջև անընդհատ խորացող «անդունդի» մասին, գրում է, որ «եկեղեցիների բաժանումը Աստծո պատուհասն է և ոչ թե Աստծո կամքը: Աստծո կամքն անփոփոխ է, այն է՝ թող միասնական լինի հոտը և միասնական լինի հովիվը»¹⁹, միևնույն է, «Քրիստոսի հոտը բաժանող այդ կործանարար փոսը»²⁰ մնալու է, եթե անգամ ավելի չխորանա, որովհետև այդ առանձնահատկություններով, այդ «չլցված փոսով» է նաև պայմանավորված ազգային ինքնության պահպանումը: «Տարբերելու այս հակման շնորհիւ, ինչպես յայտնի է, հայոց ազգայնացած քրիստոնեութիւնն ստացաւ ցեղի կրօնական անձնաւորման բնոյթ եւ իբր այդպիսին ո՛չ արեւմտեան եկեղեցիների դաւանութեանց որեւէ զիջում արեց, ո՛չ Արեւելքի հակաքրիստոնէական յորձանքներին տեղի

¹⁶ Նույն տեղում, էջ 306:

¹⁷ Կ.Պոլսի կաթոլիկները, անհանգստացած Մխիթարյանների ազգային գործունեությամբ, հաղորդել էին Հռոմ. «... թե Հռոմ դեմ ապստամբներու պարագլուխները Ռաֆայելյան և Մուրատյան վարժարաններու աշակերտներն են: Մխիթարեանք փոխանակ կրոնասեր աշակերտներ տալու ազգին, հայրենասեր աշակերտներ կուտային. ոճիր մը էր այս: Եվ Հռոմ կհրամայէր Մխիթարյանց, որ այլևս իրենց աշակերտներուն ազգության և հայրենասիրության հորդորներ չտան» (**Արփ. Արփիարյան**, Օրվան կյանքը // Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Եր., 1974, էջ 9):

¹⁸ Հ.Ասատրյան, Հատըմտիր, Եր., 2004, էջ 70 - 71:

¹⁹ **Соловьев В.**, նշվ. աշխ., էջ 50:

²⁰ Նույն տեղում:

տւեց, ո՛չ էլ զրադաշտականութիւնը կամ իսլամը քրիստոնէութեան հետ հաշտեցնելու փորձութեան դիմեց»²¹, - գրում է Հ. Ասատրյանը:

Օսմանյան կայսրությունը, որի տիրապետության տակ հայ ժողովուրդը ապրեց գրեթէ կես հազարամյակ, բազմազգ պետություն էր: Ընդ որում, նրա տիրապետության տակ գտնվող ազգերի մեծ մասն ավելի բարձր մշակույթ ուներ, քան տիրապետող ազգի մշակույթն էր: Սուլթանները, ինչպես նաև թուրք հասարակական-քաղաքական գործիչները լավ էին հասկանում, որ այս պայմաններում ոչ միայն խոսք չի կարող լինել այդ ժողովուրդների կամավոր ձուլման մասին, այլև դա հղի էր կայսրության տրոհման և ազգային պետությունների ստեղծման վտանգով: Այդ պատճառով էլ նրանք Օսմանյան կայսրությունը դիտում էին որպես կրոնապետություն, իսկ այստեղ ապրող տարբեր ազգերին՝ կրոնական համայնքներ: Կրոնական համայնք էր համարվում նաև հայությունը: Ընդ որում, հայ ժողովրդին կրոնական համայնք էին համարում ոչ միայն թուրքերը, այլև հենց հայերը՝ իրենց կրոնով ու եկեղեցով: Պետականությունից զրկված հայության համար եկեղեցին և՛ հայրենիք էր, և՛ ազգ: Որքան էլ մենք ներքին համակրանք ունենանք Սիմոն Երեմյանի²² նկատմամբ, ով «միջնադարյան գաղափար» էր անվանում այն հանգամանքը, որ նույնիսկ XIX դարի վերջին հայ իրականության մեջ կաթոլիկ հայերին անվանում էին ֆրանկ (ֆրանսիացի), բողոքականներին՝ գերմանացի կամ անգլիացի, ուղղափառներին՝ ռուս կամ հույն՝ պայմանավորված եկեղեցու առանձնահատկություններով, մահմեդական հայերին՝ թուրք, և հայ էին անվանում միայն նրան, ով հետևում էր Էջմիածնի եկեղեցուն, միևնույն է, կրոնափոխության հետևանքները կարող են վտանգավոր լինել ցանկացած ժողովրդի համար. առավել ևս այն ժողովրդի, որը մեծ սփյուռք ունի, ում եկեղեցին կոչված է ոչ միայն հոգևոր ծառայություններ մատուցելու, այլև ազգային դպրոց է, որոշ առումներով նաև քաղաքականություն իրականացնող մարմին: Ռուբեն Տեր-Սիմասյանը, անդրադառնալով ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության խնդրին, նկատում է. «Եթե այսօր հայութիւնը գոյութիւն ունի իբր ազգային անհատականութիւն, այդ մենք մեծապէս կը պարտինք մեր եկեղեցիին», ընդ որում, ըստ նրա, ոչ թե «գաղափարաբանութիւնն է մեր եկեղեցիին դրական ազդակը», որովհետև այն «պարզ, նախնական քրիստոնէութիւնն է, գրեթէ նոյնը, ինչ որ օրթոտոքս եկեղեցիինը, որմէ եղած տարբերութիւնը ծանօթ է միայն կրօնական մասնագէտներուն, աստուածաբանութեան տոքթորներուն»: Մեր «առանձնութեան և ազգային կերպարանքի պահպանման» պատճառը «մեր ազգային ինքնատիպութիւնը աւելի մեր եկեղեցիի կազմակերպութեան մէջ է. հայութիւնը կորցնելով իր հայրենիքը, իր հոգու մէջ ստեղծեց մի վերացական հայրենիք, մարմնացնելով զայն

²¹ Հ.Ասատրյան, նշվ. հրատ., էջ 75:

²² Սիմոն Երեմյան (1871-1936). Մխիթարյան միաբանության անդամ, 1899-1905-ին խմբագրել է «Բազմավեպը», 1901-ից՝ նաև «Գեղունի» հանդեսը: Առավել հայտնի է իր հայագիտական ուսումնասիրություններով, հատկապես՝ «Գրագետ հայեր» 10 հատորանոց աշխատությամբ (1913-1933) և բազմաթիվ այլ ուսումնասիրություններով:

Էջմիածնի քարերի մեջ»²³: «Եկեղեցին դադարեց լոկ աղոթատեղի լինել և սկսաւ դառնալ մի քողարկուած իշխանութիւն, մի դատարան, մի կրթական հաստատութիւն, մի մշակոյթի վայր, արտաքին յարաբերութեանց և հայ ժողովրդի ներկայացուցչութեան կենտրոն, և նոյնիսկ տնտեսական ձեռնարկների խորհրդատու»²⁴: Յավոք, հայ քաղաքական կուսակցությունները՝ հետամուտ իրենց այսրոպեական շահերի, հաճախ քննադատությունների և հարձակումների թիրախ են դարձնում նաև հայ հոգևորականներին և եկեղեցին, անտեսելով հնարավոր վտանգները, առանձին դեպքերում գիտակցաբար նույնացնելով հոգևորականությունը և եկեղեցին, լավ իմանալով, որ հոգևորականը իբրև մահկանացու, կարող է նաև արժանի չլինել կոչվելու «եկեղեցու հայր», առավել ևս՝ «սուրբ հայր»: Ընդ որում, նման սխալից շատ հաճախ գերծ չեն մնում նաև խոշոր մտածողները: Ամենատիպականը, թերևս, Լ.Շանթի օրինակն է: Այդ մեծ մտածողը, մեծ մանկավարժն ու ազգային գործիչը, որը, «հակառակ իր միւս ընկերներուն բռնած ընթացքին», համոզված էր, որ «հայութեան միակ փրկութիւնը Ռուսաստանն է, ինչ ալ ըլլայ անոր վարչակարգը»²⁵, հիասթափված սփյուռքի որոշ հոգևորականների գործունեությունից, որոնց մեղադրում էին խորհրդային իշխանության օգտին լրտեսության մեջ, ունեցավ իր «մեծ սխալը»: Հայաստանի խորհրդայնացումից հետո ապրելով սփյուռքում, որն «անվերականգնելիորեն» պառակտված էր, չկարողացավ վեր բարձրանալ նեղ կուսակցական ըմբռնումներից. «Սէկ կողմը կայ իր կուսակցութիւնը՝ դաշնակցութիւնը իր համախոհներով, միւս կողմը՝ հակառակորդ ճակատը՝ Ռամկաւար, Հնչակեան եւ Համայնաւար տարրերէ բաղկացած: Լ.Շանթ կը յանգի ցաւագին այն եզրակացութեան, որ գործակցութիւնն անհնարին է այդ երկու յատուածների միջեւ: Տարբեր են նրանց նպատակները, գործելակերպը, տարբեր է նոյնիսկ նրանց իդեալը»: Եվ Շանթը մտածում է, որ իրերի այս դրության մեջ մնում է միայն մեկ ելք՝ «անջատ ու այլանպատակ գործունեութիւնը»: Այդ մասին է վկայում իր կուսակցից Վահան Նավասարդյանին ուղղված նրա նամակը. «Ձուր է, սիրելիս, գուր,- գրում է Շանթը,-

²³ Այս հանգամանքը նկատի ունենալով էր, որ Շահ-Աբասը հայերին բռնի Պարսկաստան գաղթեցնելուց հետո ցանկացել է Էջմիածնի Մայր տաճարը նույնպես ամբողջությամբ քանդել և տեղափոխել Պարսկաստան և այնտեղ կառուցել նոր տաճար, հայերին նոր բնակատեղիին կապելու նպատակով: Հետագայում որոշվեց տանել միայն չորս անկյունների նշանավոր քարերը, պատարագի սուրբ սեղանը, Քրիստոսի իջման տեղի քարը, մկրտության ավազանը, բեմի քարերից, քարե աշտանակներ, ինչպես նաև Լուսավորչի Աջը: Առաքել Դավրիժեցու վկայությամբ՝ «Էջմիածնի քարերի և Լուսավորչի Աջի Սպահան տանելու պատճառը նրանց (կաթողիկոսների) հակառակությունն էր»: Քարերը և Լուսավորչի Աջը, ամենայն հավանականությամբ, տեղադրվել են Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքային համալիրում կառուցված փոքրիկ եկեղեցու մեջ, որի հիմքի վրա հետագայում կառուցվեց Նոր Ջուղայի Մայր տաճարը: Թեպետ ջողայեցիները ձգտում էին իրենց մոտ պահել Լուսավորչի Աջը այն պատճառաբանությամբ, թե «եթե սա էլ տանք, էլ ինչով մխիթարվենք այս երկրի պանդխտության մեջ, որում գտնվում ենք», այնուամենայնիվ, Փյոլպոս կաթողիկոսի ջանքերով 1638 թ. այն վերադարձվում է Էջմիածին, որի մասին վկայում է Ա.Դավրիժեցին:

²⁴ Ռ. Տեր-Մինասյան, ՀՅԴ կազմակերպությունը // Ռ. Տեր-Մինասյան, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2011, էջ 290-291:

²⁵ Ս. Իզմիրլեան, Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին (Անճնական յուշերուս ընդմէջէն), Եր., «Նաիրի», 1996, էջ 36:

տարբեր մարդիկ են անոնք, տարբեր մարդիկ ենք մենք: Նոյն լեզուն կը խօսինք, ա՛յո, սակայն նոյնը չեն մեր հոգիները, նոյնը չեն մեր ըմբռնումները, բարքերը, ձգտումները, բարոյականը:

Եթէ կ'ուզես՝ երկու իրարմէ տարբեր ժողովուրդներ ենք եւ իրարմէ ալ բաժան պիտի ապրինք, անոնք իրենց համար եւ մենք մեզ համար: Մենք մեր եկեղեցիները պիտի ունենանք, իսկ անոնք՝ իրենցը. մենք մեր վարժարանները, մշակութային հաստատութիւնները պէտք է ունենանք, իսկ անոնք իրենցը: Մենք մեր Կարմիր Խաչը, իսկ անոնք իրենցը, մենք մեր ազգային իշխանութիւնները, իսկ անոնք իրենցը. մենք մեր ակումբները, մեր կազմակերպութիւններն ունինք, իսկ անոնք իրենցը... Անոնք մեզ չեն հասկնար, իսկ մենք զիրենք. երկու տարբեր ժողովուրդներ ենք եւ տարբեր կեանքով ալ պէտք է ապրինք, մինչեւ որ օր մը մեր հողին վրայ խմբուինք: Հոն հայրենի հողը մեզ կը ձուլէ, մեզ կը միացնէ, կը նոյնացնէ այնքան, որ մեր միատեղ կեանքը այլեւս կարելի դառնայ. հոս անհնարին է. գուր է, գուր, այս ամենը...»²⁶: Եթե այս տողերի հեղինակը որևէ շարքային կուսակցական լինէր, թերևս կարելի էր նաև ուշադրություն չդարձնել ընդհանրացումներին: Սակայն այս դատողությունները Լ.Շանթինն են՝ ազգային գրականության, մանկավարժության, քաղաքականության ամենախոշոր և ամենաազդեցիկ դեմքերից մեկինը, հետևաբար, նա պիտի լավ պատկերացներ, թե ինչ է նշանակում որևէ ազգի համար մշակութային, եկեղեցական, կազմակերպական բաժանումը... Կուսակցական-քաղաքական այդ հակամարտության հետևանքով էր, որ անցած դարի 50-ական թվականների սկզբին Կիլիկիայի կաթողիկոսական աթոռը դարձավ քաղաքական շահարկումների առարկա, ինչը 1956 թ. հանգեցրեց երկու աթոռների փոխհարաբերությունների սրմանը և ոտնձգությունների Ամենայն հայոց կաթողիկոսության ենթակա սփյուռքի թեմերի հանդեպ, որի հետևանքով մի շարք թեմեր, որոնք ավանդաբար կապված էին Մայր աթոռ Ս.Էջմիածնի հետ, անցան Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո: Դա ազգային ամբողջականության բաժանում է, որը հետագայում չի կարող միավորել ոչ միայն «Հոդ Հայրենին», այլև մեր ամբողջ ազգային դիցարանը..., որովհետև, եթե օտարության մեջ՝ Սփյուռքում, լուծվում է ընդամենը գոյապահպանական խնդիր, ապա հայրենի հողի վրա ծառանալու են նաև քաղաքական և տնտեսական խնդիրներ: Մանավանդ, եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ «Հայը ընդունակ չէ ոգու երկու ուղղություններ կրել իր անձի մեջ: Մեր այս հոգեգծով մենք հակապատկերն ենք հրեայի: Այդ է պատճառը, որ օտարութեան մեջ մենք չենք կարող օգտուել նրա ցեղային ինքնապաշտպանութեան մեթոդից: Նա մոռանում է լեզուն, ծպտում է իբր ոչ-հրեայ, բայց Թալմուտի մի բառով պահում է ցեղային ներքին կրակի մոլեգնությունը: Ծպտումի ընդունակ հային չի կարող փրկել ամբողջ «Նարեկ»-ը»²⁷, - գրում է հայ հոգեբանությանը քաջածանոթ Հայկ Ասատրյանը:

²⁶ Համազգային եւ Ն.Փալանճեան ճեմարանի քսանհինգամեակ, 1929-1954 թթ., 1954, էջ 14:

²⁷ Հ. Ասատրյան, նշվ. հրատ., էջ 101:

Եկեղեցական և դավանաբանական առանձնահատկություններն աստիճանաբար բաժանում և հեռացնում են նույնիսկ միևնույն նախահորից սերված սերունդներին... Դրանից լավագույնս կարողանում էին օգտվել Օսմանյան կայսրության իշխանությունները՝ լուծելով երկու կարևոր խնդիր. մի կողմից՝ միավորում էին կայսրության սահմաններում ապրող միանգամայն տարբեր ծագումնաբանություն, պատմություն, մշակույթ և լեզու ունեցող ժողովուրդներին մահմեդականության շուրջ (համիսլամիզմի գաղափարախոսությունը). «Սեր պետությունը կրոնական պետություն է, եթե իսլամի միության գաղափարը վերջացավ, մեր պետությունն էլ կվերջանա»²⁸, - ասում էր Ա.Համիդը: Իսկ մյուս կողմից՝ հետևելով նախնական բնագրերին, իրենց կողմից գրավված տարածքներում ոչնչացնում էին եկեղեցիները և մահվան սպառնալիքով կրոնափոխ անում նվաճված ժողովուրդներին: Այդպես էին վարվում նաև թուրքաբարո մյուս նվաճողները: «Սուլթան Ջալալեդդինը ԺԳ դարում, հազարավոր երեխաներ թափում է գետերը. նա ոչնչացնում է 100 000 վրացի: Վերցնել է տալիս Սիոնի տաճարի գմբեթը եւ բարձրանում նրա վրայ, որպեսզի հրճուի Թիֆլիսի բնակչության պատճառած չարչարանքների պատկերից, Ալի Արսլանը խորտակեց Անիի մայր տաճարի գմբեթը, վերցնել տվեց նրա մեծ խաչը, որն իբրեւ մահմեդականների ոտից կոխան՝ գետեղուեց Նախիջևանի մզկիթի դրան շեմին»²⁹: Իսկ ավելի ուշ, գիտակցելով կրոնական տարբեր դավանաբանությունների և եկեղեցիների միջև գոյություն ունեցող անհանդուրժողական և թշնամական վերաբերմունքը, օսմանյան իշխանություններն ամեն կերպ աջակցեցին ոչ մահմեդական ժողովուրդների կրոնական պառակտումներին: Պատահական չէ, որ թուրքական սուլթանների քաղաքականությանն ու դիվանագիտությանը քաջածանոթ հեղինակները նրանց ուժի գաղտնիքը տեսնում էին քրիստոնյաներին բաժանելու և միմյանց հակադրելու մեջ: Նման բաժանումը հնարավորություն էր տալիս կանգուն պահելու կայսրությունը՝ շնորհիվ «քրիստոնեայի և իսլամի միջև» ստեղծված անհավասարության, «կրօնական անողորմ ու դաժան» խտրականության»³⁰:

Օսմանյան կայսրության հիմնադիրները լավ էին հասկանում եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում, այդ պատճառով էլ դեռևս 1461 թ., այսինքն՝ Կ.Պոլսի գրավումից ընդամենը ութ տարի հետո, այստեղ հիմնվեց հայոց պատրիարքությունը, որին վերագրվում էին ընդարձակ կրոնական և աշխարհիկ իրավունքներ՝ տնօրինելու Թուրքիայի վարչական իրավասության ներքո գտնվող հայության կրթական ու լուսավորչական, տպագրական, բարեգործական և մշակութային գործունեությունը: Նպատակը ոչ թե հայ ժողովրդի կեցության բարելավումն էր, այլ միասնական եկեղեցու մասնատումը, Ս.Էջմիածնի ազդեցության նվազեցումը Օսմանյան կայսրության հպատակ հայության վրա, որովհետև Էջմիածինը գտնվում էր պարսկական տիրապետության տակ, հետևաբար՝ նաև վարում էր պարսկահաճ քաղաքականություն: Իսկ ավելի ուշ օսմանյան իշխանություններն սկսեցին ա-

²⁸ Ըստ «Հորիզոն», 1913, ք. 41:

²⁹ Հ. Ասատրյան, նշվ. հրատ., էջ 287 (հղումն արված է ըստ՝ Марков Евгений, Очерки Кавказа, 1887, էջ 395):

³⁰ Տե՛ս Ա. Կեսար, Հայկական հարցը 19-րդ դարում, «Վեմ», 1938, ք. 4, էջ 7:

ջակցել հայ կաթոլիկ և բողոքական եկեղեցիների գործունեությանը՝ դրանց տալով հատուկ կարգավիճակ: Նախ՝ 1829 թ. անգլիական և ֆրանսիական իշխանությունների ճնշման տակ օսմանյան իշխանությունների կողմից Ադրիանապոլսի պայմանագրի 12-րդ կետով հայ կաթոլիկներին շնորհվեց «կաթոլիկ ազգի» (կաթոլիկ միլլեթ) կարգավիճակ և վարչական ինքնավարություն՝ սեփական արքեպիսկոպոսի գլխավորությամբ, իսկ 1847 թ. սուլթանի կայսերական հրամանագրով որպես օրինական ազգ (միլլեթ) է ճանաչվում նաև բողոքական հայությունը (Հայ ավետարանական եկեղեցին): Եվ այսօր, որքան էլ (որպես արդարացում մնան եկեղեցական բաժանումների) ասենք, թե դրանց միջև ընդհանուր են լեզուն և մշակույթը, պատմական հիշողությունը, պարտավոր ենք խոստովանել, որ ժամանակի հետ մշակութային ընդհանրությունը և ընդհանուր ավանդույթներն իրենց տեղը զիջելու են, ձևավորվելու են այլ ավանդույթներ և մշակութային այլ արժեհամակարգ: Այս տեսանկյունից՝ անհանգստացնող են այն թվերը, որ հիշատակվում են այսօր. ամբողջ աշխարհում հաշվվում է մոտ 600 000 հայ կաթոլիկ և բողոքական, ավետարանական եկեղեցու հետևորդներ՝ մոտ 100 000: Խոստովանենք, որ տասը միլիոնանոց ազգի համար մնան համամասնություններով բաժանումները զգաստացնող են: Ի միջի այլոց, եթե այդ բաժանումների հետևանքով թուլացավ հայոց պատրիարքարանի իշխանությունը և նվազեց ազդեցության ոլորտը, ինչը կարելի է համարել Օսմանյան կայսրության ազգային քաղաքականության նպատակը, ապա կաթոլիկ և բողոքական հայերին առանձին ազգի կարգավիճակ տալն իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև Օսմանյան կայսրության վրա: Օգտագործելով կաթոլիկ և բողոքական համայնքների գոյությունը՝ եվրոպական պետությունները սկսեցին ավելի ակտիվորեն միջամտել կայսրության ներքին գործերին՝ իրենց հավատակիցների իրավունքները պաշտպանելու անվան տակ: Եվ եթե մնան միջամտություններից համայնքները չշահեցին, ապա Օսմանյան կայսրությունը շատ բան կորցրեց: Այս առումով, թերևս, ավելի հեռատես քաղաքականություն էր վարում Պարսկաստանը, որը ձգտում էր պահպանել հպատակ հայության միասնությունը մեկ միասնական եկեղեցու շնորհիվ:

Ազգերի և ազգայնականության ժամանակակից հետազոտողների մի մասը հատկապես կարևորում է կրոնի կապը ազգային գիտակցության հետ: Այդ կապը, ըստ Է. Հոբսբաումի, ավելի ամուր և ազդեցիկ է դառնում, երբ ազգայնականությունը փոքրամասնության կամ առանձին անհատների գաղափարախոսությունից վերածվում է զանգվածային ուժի: Նա կրոնը համարում է «պարադոքսալ և երկիմաստ ամրակապ» ոչ միայն պրոտոնացիոնալիզմի (proto-nationalism՝ նախնական ազգայնականության), այլև ժամանակակից ազգայնականության համար, ըստ որի կրոնն ուժ է, որ ընդունակ է վիճարկելու ազգի մենաշնորհային իրավունքը: Ուստի որքան էլ ուզենանք անտեսել կրոնի դերը ազգային գիտակցության և ազգագոյացման գործում, միևնույն է, չենք կարող: Այլ խնդիր է, որ հաճախ, քաղաքական-տնտեսական և այլ գործոնների առկայությամբ, «ննջում է»՝ անհրաժեշտության պահին ավելի կտրուկ շեշտելով իր ներկայությունը: Մեր մշակույթի և գրականության նշանավոր երախտավորներից մեկի՝ Նիկոլ

Աղբալյանի կարծիքով՝ ազգության հիմնական գործոնների շարքում դավանաբանական առանձնահատկություններն առաջնային չեն, սակայն օբյեկտիվ հանգամանքների փոփոխությունը կարող է փոխել նաև դավանաբանության կարևորությունը: Գաղթաշխարհում, որտեղ բացակայում է ազգության հիմնական գործոնը՝ հայրենիքը, «հայ ապրելու գերագույն ճիգի» տեսանկյունից միանգամայն կարևոր է դառնում դավանանքը. «Կրոնը մարդու կապն է իր Աստծո հետ, իսկ ազգությունը մարդու կապն է իր հայրենիքի և մշակույթի հետ»³¹: Սակայն այստեղ է, որ երբեմն, գիտակցորեն, թե անգիտակցաբար, անտեսում ենք մի կարևոր հանգամանք՝ շրջանցելով կրոն-մշակույթ փոխհարաբերությունը: Եթե նշում ենք, որ ժամանակի ընթացքում քրիստոնեությունը ազգայնացել է՝ ազգային ավանդույթների, ազգային պատմության, մշակույթի ազդեցությամբ, ապա պարտավոր ենք ասել նաև, որ ազգային մշակույթն էլ իր հերթին դարձել է քրիստոնեական, ուրեմն «ազգությունը մարդու կապն է իր հայրենիքի և մշակույթի հետ» բանաձևումից առաջ պետք է ընդունենք, որ ազգությունը մարդու կապն է իր կրոնի հետ: «Ինչպիսի՞ն է հազար յոթ հարյուր տարիների հայ մշակույթը», - հարցրեք յուրաքանչյուր մշակութաբանի: Պատասխանը մեկն է՝ քրիստոնեական է: Հետևաբար, եթե ասում ենք՝ «ազգը մշակույթ է», պետք է ընդունենք, որ յուրաքանչյուր մշակույթի հիմքում կրոնն է, որը մշակույթի հոգին է: Հայրենագուրկ հայության համար, որն անընդհատ կրում է օտար մշակույթների անմիջական ճնշող ազդեցությունը, մեծ է ազգային կրոնի դերը, որովհետև, գաղթաշխարհում բացակայում են հային հայ պահող հիմնական գործոնները՝ հայրենիքը, լեզուն, մշակույթը, դպրոցը, ազգային պետականությունը, ինչպես նաև ընդօրինակման մղող «Մեծ մեռելները»: «Հապա ուրեմն ինչպե՞ս մենք պիտի մնանք հայ, երբոր մեր մեռելներն ալ չունինք, երբոր մեր մեռելները հետերնիս չբերինք»³², - գրում է Շահան Շահնուրը, ժամանակին մեծ աղմուկ հանած «Նահանջ առանց երգի» ստեղծագործության մեջ: Միակ բանը, որ իր հետ տարել է հայ գաղթականը, պատմական հիշողությունն է՝ նաև իր «Մեծ մեռելներին» մասին, ինչպես և ազգային կրոնը, որոնք կարող են միասնական կամք և «միասնական տենչ ստեղծել» զանգվածների մեջ, և միայն այդ ճանապարհով է հնարավոր «կղզիացած հայութին պահել օտար ազգերի ծովում»³³:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ կասկածից դուրս է տարածքային, տնտեսական, մշակութային և լեզվական ընդհանրության կարևորությունը ազգերի ձևավորման և գոյության ընթացքում, սակայն, առանձին դեպքերում, մասնավորապես եթե բացակայում է տարածքային և տնտեսական ընդհանրությունը, ընդգծվում է եկեղեցու և կրոնի նշանակությունը: Հետևաբար՝ «ազգ» հասկացությունը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այս գործոնների դերը:

³¹ «Վեն», ԻԲ, Փարիզ, 1938, էջ 5:

³² **Շ. Շահնուր**, Երկեր երկու գրքով, գիրք առաջին, Եր., 1982, էջ 117:

³³ «Վեն», նշվ. հրատ., էջ 2-3:

ЮРИЙ ОВАКАНЯН

*Доцент кафедры „Философии” АГЭУ,
кандидат философских наук*

Роль религии и церкви в процессе формирования наций.– В современной литературе, посвященной проблемам наций и национализма, принято выделять различные модели формирования наций: „западные”, „восточные”, „французские”, „немецкие”, „примордиалистские”, „модернистические”, „конструктивные” и т.д. Во всех моделях и учениях, где при определении нации учитываются определенные объективные и субъективные признаки – территориальная и экономическая общность, общая генеалогия, общность языка и культуры, антропологический тип, историческая память, связь с государством и т.д., наряду с этим, общность религии и церкви считается не необходимой, а желательной. Между тем роль национальной религии и национальной церкви была определяющей не только в раннем обществе, когда „каждая отдельная религия была одной нацией”, или в средние века, но также в современных условиях. В статье мы не только обосновали важную и определяющую роль этих факторов, особенно если отсутствует территориальная и экономическая общность, но и указали, что при таких условиях теоконфессиональные и церковные различия приводят к нежелательным последствиям; отрекшиеся со временем от родной церкви и национальной конфессии, ассимилируются с другими нациями, ярким примером этого служит история 400-тысячной колонии польских армян в 17-ом веке, которые после принятия католичества за очень короткое время ассимилировались с поляками. Этим объясняется также то, что некоторые народы, имеющие одинаковую генеалогию, одинаковый язык и историческую память, сегодня представляются как отдельные нации только потому, что имели разную религию и церковь.

YURI HOVAKANYAN

*Associate Professor at the Chair
of „Philosophy” at ASUE,
PhD in Philosophy*

The Role of Religion and Church in the Formation Process of the Nation.– In the modern literature devoted to the problems of nations and nationalism it is accepted to separate different models of nation formation: «western», «eastern», «French», «German», «Primordial», «modern», «constructive» and others. In all the models and theories, where while describing the nation, some objective and subjective features: territorial and economic generality, general genetics, generality of language and culture, anthropological type, historical memory, combination with state and other features are taken into account, besides all these, the generality of religion and church is considered not necessary but desirable. The fact that the role of national religion and church has been decisive not only in the society at an early stage, when «each religion was

one nation», or in the middle ages, but also in modern conditions. In the article we not only justify the important and decisive role of those factors, especially, when the territorial and economic generality is missing, but we show, that in such cases the differences of church and religion leads to undesirable results: those who have departed from mother church and faith during some time period, are assimilated with other nations, its most eminent sample is the history of the colony of 400 thousand Polish Armenians in the 17th century, who in a short run after adopting Catholicism were assimilated with the Polish people. It also explains the fact, that nations having the same genetics, the same language and historic memory, nowadays are presented as different nations only because their religion and church have been different.